

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

22732



1932-

7-73  
44 զործագրվու  
ժանման,  
աշխատան  
ման, և

10

(164)

## ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՅԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

(բացատրական նամակ)

ՈՒՍՈՒՑՄԱՆ 5-ՐԴ, 6-ՐԴ ՑԵՎ, 7-ՐԴ ՏԱՐԻՆԵՐ

Ներկա ծրագրերը 1932 թվի ծրագրերի վերամշակման  
արդյունքն են հանդիսանում:

Կենտկոմի՝ 1931 թվի սեպտեմբերի 5-ի և 1932 թ.  
ոգոստոսի 25-ի ցուցմունքների համաձայն, ծրագրերի վե-  
րամշակումը կատարվել է հետևյալ ուղղություններով:

1. Ծրագրային նյութի ծավալը բավականաչափ կը բ-  
ճառված է: Հանված են տրանսպորտը և կապը: Քիմիական  
արտադրությունը փոխադրված է 3-րդ կոնցենտրը: Բավա-  
կանաչափ թեթևացրոծ և մեխանիկական արտադրության  
բաժնի նյութը— փայտամշակումը և մետաղամշակումը:  
Փայտամշակումը, նակխին յերկու տարվա փոխարեն, տա-  
րածված է ուսուցման յերեք տարվա վրա: Մետաղի մշա-  
կումը նույնպես անցնում ենք յերեք տարում:

2. Կատարված է ծրագրային նյութի ներքին վերաբաշ-  
խում՝ յերեխաների տարիքային առանձնահատկություննե-  
րի և նրանց ընդհանուր պատրաստության մակարդակի  
համապատասխան:

Փայտամշակման ծրագրում (գիտելիքների և ունակու-  
թյունների ծավալի կրճատման հետ միասին) ձեռքի մշակ-  
ման ավելի զժամանակ ոպերացիաները 5-րդ տարվանից փո-  
խադրված են 6-րդ և 7-րդ տարիները, և նրանց փոխարեն  
տրված են շինարարական բնույթ ունեցող պարզ աշխատանք-  
ներ, վորոնք իրնց մեջ կոնսարտուկտիվ ստեղծագործական  
ելեմենտներ են պարունակում: Մետաղամշակման ծրա-  
գրում՝ ուսուցման 5-րդ տարում մտցրել ենք թեթև բնույթ  
ունեցող աշխատանքներ (աշակերտների հետաքրքրությա-  
նը բավարարություն տալու համար մտցրել ենք դյուրահալ  
մետաղների զոդում):

Յեղնելով աշակերտների տեխնիկական մտահորիզոնն  
ընդլայնելու նպատակից, յուրաքանչյուր տարի ծրագրել

2010

2709

բոլոր բաժններն սկսվում են տեխնիկայի,  
թյան և սոցշինարարության՝ ամենից առաջ  
կերտների համար հետաքրքիր, եմոցիոնալ-ցայր  
յելտների ցուցադրումով:

3. Բարելավված է աշակերտների տեխնիկական մտա-  
հրելզնի ստորանական ընդլայնման սիստեմը, աշխատան-  
քային ունակությունների և աշխատանքի ու արտադրու-  
թյան կազմակերպումն ըմբռնելու աճման սիստեմը: Նպա-  
տակ ունենալով աշակերտներին ծանոթացնել խոչըր արտա-  
դրության հիմունքների հետ՝ ծրագրերը պահպանում են  
իրար հետեւ վաղական սիստեմ՝ զպրոցական արհեստանոցի  
աշխատանքից անշներով խոչըր արտադրության ուսումնա-  
միքության և այնուհետ աշխատակուն:

Այսպես որինակ՝ ուսուցման 5-րդ տարում տալիս ենք  
փայտի և մետաղի՝ ձեռքի մշակման պրոցեսները գպրոցա-  
կան արհեստանոցներում և նրանց համեմատությունը ձեռ-  
քի մշակման հետ՝ խոչըր արտադրության մեջ: Դրա հետ  
միասին, 5-րդ խմբի աշակերտները ծակիչ հաստոցի վրա աշ-  
խատելու սկզբնական ունակություններ են ձեռք բերում և  
ստորանարար սկսում են ըմբռնել այն տարրերությունը,  
որ գոյություն ունի ձեռքի և մեքենայացրած աշխատանքի  
ուրասուղղականության և կազմակերպության միջև՝ խո-  
չըր արտադրության մեջ: Ուսուցման 6-րդ տարում աշա-  
կերտներն ընդարձակում են գործադրվող գործիքների,  
տեխնիկական ոպերացիաների և տեխնոլոգիական գիտելիք-  
ների, ինչպես նաև խոչըր արտադրության ծանոթության  
ըջանակը: Այստեղ բավականաչափ խոչըր տեսակարար  
կերպում և ստանում փայտի և մետաղի մեքենայացրած մշա-  
կումը: Այս տարածվում են աև ադրոնոմիայի ծրագրի կա-  
ռուցման ընույթի վրա: Ուսուցման 7-րդ տարում ձեռքի և  
մեքենային մշակման ավելի նուրբ և ճշգրիտ գրվագման  
ոպերացիաների տիրապետման խնդիրն ելուծվում և դրա-  
նով ավարտվում աշխատանքային կոլտուրայի համար  
տարվող պայքարը, վոր գպրոցը մղում և ուսուցման բոլոր  
տարիներում: Այստեղ տեխնոլոգիական գիտելիքների ըրբ-  
ջանը բավականաչափ ընդլայնվում է: 7-րդ խմբում խոչըր  
ձեռնարկության տեսակետից սիստեմատիզացիայի յեն յեն-  
թարկվում, ամփոփվում և ուսումնասիրվում աշխատանքա-  
յին ուսուցման ծրագրերի բոլոր բաղկացուցիչ ելեմենտները՝  
գործադրության ըջանակում: Ձեռք են բերվում գի-  
տելիքներ և ունակություններ արտադրության մեջ

գործադրվող նշումների, արտադրական պրոցեսի բա-  
ժանման, աշխատանքային տեղերի կազմակերպման,  
աշխատանքի գիտական կազմակերպման, վերատուգ-  
ման, պլանավորման և հաշվառման խնդիրներում: Ծրա-  
գրի համուկ բաժինը՝ «Արտադրության կազմակերպումը  
մայր արտադրության մեջ կապված արտադրողական աշ-  
խատանքի հետ» ամփոփում և աշխարհուների գիտելիքները  
և ունակությունները՝ ծրագրի բոլոր բաժիններում և ծա-  
նոթություն տալիս սոցիալիստական արտադրության վերա-  
կառուցման հիմնական գծերի մասին:

4. Ծրագրերը ցուց են տալիս երեկորդի կացիայի ղե-  
կավար գերն արտադրության գլխավոր ձյուղերում: Ձեռքի  
գործիքների և մեքենաների, ինչպես և մեքենաների ավելի  
յետամնաց և ավելի առաջավոր տիպերի համեմատու-  
թյամբ, ձեռքի և մեքենային աշխատանքի արտադրության  
պրոցեսի համեմատության միջոցով, չոգե և ելեքտրաշարժ-  
ութերի կիրառումով և այլն, մեխանիկական արտադրու-  
թյունն աստիճանաբար հասկացողություն ե տալիս անհա-  
տական ելեքտրոնոտորի և հաստոցի բանող մասերի, մեքե-  
նայի բանող մասերի ավելի ու ավելի մերձեցման մասին:

Ազրոնոմիայի հիմունքներն աշակերտներին ծանոթաց-  
նում են գյուղատնտեսության, վորակե խոչըր սոցիալիստա-  
կան արտադրության, մեխանիզացիայի և ելեքտրիֆիկացիա-  
յի եյության և առավելության մասին:

Ելեքտրոտեխնիկական աշակերտներին ծանոթություն ե  
տալիս ելեքտրական եներգիայի գերի մասին՝ ժողովրդա-  
կան տնտեսության մեջ և ելեքտրականության գործադրու-  
թյան մասին՝ արտադրության հիմնական պրոցեսներում  
(շարժիչ ուժ, ելեքտրոզուգում, ելեքտրոնալ, ելեքտրոլիզ):

Արտադրության կազմակերպումը ծանոթացնում ե ար-  
դեն վոչ միայն առանձին արտադրական պրոցեսներին, այլև  
ժողովրդական վողջ տնտեսության ելեքտրիֆիկացիային:

5. Իրար հետ համաձայնեցված են աշխատանքային  
ուսուցումը և հանրակրթական գիտելիքները: Այդ նպատա-  
կով փոփոխություն ե կատարված նյութերի տեխնոլոգիա-  
կան գիտելիքների գասավորման մեջ: Վեցերորդ խմբից  
յոթերորդ խումբ և փոխադրված մետաղի ջերմային մշակ-  
ման ծանոթությունը, ձուլման գործը, խառատի հաստոցի  
ուսումնասիրությունը (ավելի մանրամասն): Վերացված են  
գծադրերն ու հաշվարկների պահպանը, յեթե գրանք (գծա-  
դրերն ու հաշվարկը) չեն ապահովված աշակերտների հան-

բակըթական պատրաստությամբ։ Ազրոնոմիայի հիմունքները տարածվում են ուսման Յ տարվա վրա (բացի Հանրակըթական առարկաների հետ կապ ստեղծելուց, վերջինս թելադրվում է գյուղատնտեսության դժով դարձնանային և աշխատային աշխատանքների ոգտագործման անհրաժեշտությամբ)։ Նկատի ունենալով այն, վոր աշակերտությունը բավականաչափ պատրաստություն չունի քիմիական արդյունաբերությունն ուսումնասիրելու համար, այդնյութը փոխադրվում է յերրորդ կոնցենտրացիային պոլիտեխնիկական ուսուցումը, վոր արված և ներկա ծրագրերով, պոլիտեխնիկական կըթության բովանդակությունը չի սպառում։ Նա վերջինիս բաղկացուցիչ մասն և կազմում։ Պոլիտեխնիկական կըթության խնդիրը կարելի յել լուծել միայն սերտ կապ ստեղծելով աշխատանքային պոլիտեխնիկական ուսուցման և մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի և այլ առարկաների միջև։

Ներկա ծրագրերում կապը և համաձայնեցումը հանրակըթական առարկաների հետ արտահայտվում են հետեւյալ ձևով։

ա) Հանրակըթական առարկան և աշխատանքային ուսուցման ծրագրերը պահպանում են յուրաքանչյուրն իր սիստեմատիկան։ Կապը չի նշանակում վոչ Հանրակըթական առարկայի և վոչ ել աշխատանքային ուսուցման սիստեմի խախտում։

բ) կապը պետք է նախատեսի Հանրակըթական առարկաների և աշխատանքային ուսուցման ծրագրերի նյութի փոխադրձ հաշվառում և ոգտագործում։

գ) ծրագրերն անցնելու պրոցեսում կապը չի պահանջում, վոր 1) աշխատանքը և Հանրակըթական առարկաները միևնույն խնդիրն անպայմանորեն միաժամանակ ուսումնասիրեն և վոր 2) կապի բոլոր գեպքերում Հանրակըթական առարկան անմիջապես աշխատանքային ուսուցման առաջից կամ յետելից ընթանա։

դ) կապը պահանջում է, վոր աշխատանքային ուսուցումն այն գեպքում, յերբ տվյալ հարցի վերաբերյալ աշակերտները չունեն Հանրակըթական բազա, տա գործնական, նկարագրական ծանոթություն նյութերի հատկությունների, գործիքների և աշխատանքային պրոցեսների մասին և նորից վերագառնա այդ հարցերին, յերբ արդեն համապատասխան Հանրակըթական առարկան նյութերի այդ հատկությունների ըմբռնման դիտական բազա կստեղծի։ Որինակ՝

5-րդ խմբում բնափայտի հատկությունը՝ բուսաբանության հետ ծանոթանալուց առաջ և 6-րդ խմբում՝ այդ ծանոթությունից հետո, հաստոցը՝ 5-րդ խմբում, մեխանիկայի ելեմենտներին ծանոթանալուց առաջ և 6-րդ խմբում՝ այդ ելեմենտների ծանոթությունից հետո և այլն։

Աշխատագային ուսուցման կողմից Հանրակըթական պատրաստությանն առաջանձների տեսակետից անհրաժեշտ և պոլիտեխնիկա աշխատանքի նյութերի հետևյալ պլանավորումը։

ա) ագրոնոմիայի հիմունքների մշակումը 5-րդ տարվա յերկրորդ կիսամյակում, 6-րդ տարվա առաջին կիսամյակում։

բ) ելեքտրոտեխնիկայի և արտադրության կազմակերպման մշակումը 7-րդ տարվա յերկրորդ կիսամյակում։

6. Ուշագրություն և գարձելու սիկական և ուսալ արտադրողական աշխատանքի ապահովման վրա։ Այդ ձևոք և տագրողական աշխատանքի ապահովման վրա։ Այդ ձևոք և բարված տեխնոլոգիական դիտելիքների մանրամասնությունների կրծատմամբ, տեխնիկական ողերացիաների բազմազանության նվազեցումով, արտադրողական աշխատանքի որյեկտների ընարության լավացումով։ (որյեկտների պարզեցում, յուրաքանչյուր որյեկտի համար պահանջվող ողերացիաների քանակի կրծատում)։ Աշակերտների անմիջական արտադրողական աշխատանքին հատկացվում է՝ փայտամշակման 130 ժամից 106 ժ., մետաղամշակման 155 ժամից՝ 108 ժ., ելեքտրոտեխնիկայի 35 ժամից՝ 20 ժ., արտադրության կազմակերպման ուսումնասիրության 40 ժամից՝ 25 ժ. և այլն։

Աշակերտների արտադրողական աշխատանքը պետք է տեղի ունենա դպրոցական արհեստանոցում և խոչըր արտադրության մեջ։ Դպրոցի ուսումնադասարկական նպատակների տեսակետից ավելի կատարելագործվածն ու ավելի եթեկտիվն այն աշխատանքն է, վորը տեղի յեւ ունենում ամենաաջակոր ձեւերով, իսկական արտադրության մթնոլորտում, մանկավարժութեան ճիշտ կազմակերպված աշխատանքը խոչըր արտադրության մեջ։ Նկատի ունենալով դպրոցական արհեստանոցների թույլ կահավորումը ժամանակակից հասանողներով, դպրոցը պետք է ձգտի՝ արդեն ուսուցման 6-րդ տարվանից, ձեռնարկության մեջ իրականացնել արտադրողական աշխատանքի մաքսիմումը, յեթե ձեռնարկությունն ապահովում է այն պայմանները, վորոնցով հարավոր կլինի ձեռք բերել ծրագրի համապատասխան բաժնների դիտելիքները և ուսակությունները։ Սակայն դպրոցական արհեստա-

նոցներն ևս հնարավորություն են տալիս ապահովելու իրապես ուստի, իրապես արտադրական աշխատանքի և աշխակերտների մասնակցությունը հասարակական արտադրության բարձրացման գործում:

Արհեստանոցները, —վորպես աշխատանքի և արտադրության հիմունքների նպատակահարմար և սիստեմատիկ ուսուցման մի վայր, —ձեռնարկության մեջ աշխատելու նախապատրաստության անհրաժեշտ ետապն են հանդիսանում: Այդ պատճառով, գպրոցական արհեստանոցների աշխատանքի կապակցումը ձեռնարկության աշխատանքի հետ՝ հանդիսանում է աշխատանքային ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմանը:

Հասարակական արտադրողական աշխատանքը յենթաքիվում է գպրոցի ուսումնական և դաստիարակչական նպատակներին: Այդ նշանակում է, վոր արհեստանոցներում արտադրողական աշխատանքի որյեկտները և խոշոր արտադրության մեջ աշխատանքային տեղերն ընտրելիս, ինչպես և աշխատանքային պրոցեսների բնույթը, աշխատանքի տեղույթը և ինտենսիվությունը վորոշելիս, մեկ աշխատանքային տեղից մյուսին անցնելու կարգը հաստատելիս, առաջին հերթին մենք զեկավարվում ենք ուսուցման և դաստիարակության շահերով: Արտադրողական աշխատանքի յենթաքիվումը ուսուցման և դաստիարակության նպատակներին չի նշանակում աշխատանքային ուսուցման յենթաքիվումը հանրակրթական առարկաներին: Այդ նշանակում է, վոր աշխատանքային ուսուցման զեկավար ելեմենտները հանդիսանում են տեխնոլոգիական գիտելիքները և հիմնական գործիքների գործածության ունակությունների սիստեմատիկան:

Սրա հետ միասին, աշակերտների աշխատանքի արդյունավետառնունը և պատրաստած իրերի ոգտակարությունը կարևորագույն գործոն են հանդիսանում: Վորպես որենք, պետք է ընդունել, վոր աշակերտները ունակություններ և կարողություններ ձեռք են բերում վոչ թե հասարակ վարժության, այլ իրավես ոգտակար առարկաների պատրաստման կարգով:

Հասարակական արժեք ունեցող առարկաների պատրաստման աշակերտաների համար ուսուցր դաստիարակչական նշանակություն: Այդ փաստն աշակերտների մեջ ուժեղացնում է հետաքրքրությունը գեպի աշխատանքը, ուժեղացնում է պատասխանատվության գործումն իր աշխատանքի համար և, հետերար, հեշտացնում է տեխնոլոգիական գիտելիքների

յուրացումը և աշխատանքային ունակություններ ձեռք բերելը:

Ծրագրերում հիշատակված աշխատանքի որյեկտները տալիս ենք մոտավոր կերպով: Այդ որյեկտները հանդիսանում են տեխնիկական գործողությունների բազմազանության և դժվարության աստիճանաբար աճող սիստեմ: Սակայն դպրոցի, նրա հասարակական-արտադրական ըջապատիկ կոնկրետ պայմաններն արտադրողական աշխատանքի և այլ որյեկտների պահանջ են առաջադրում: Այդ պատճառով գործադրվող գործիքների և տեխնիկական ոպերացիաների ըջանակի աստիճանական և հետեղողական ընդլայնման սիստեմով զեկավարվելով, յուրաքանչյուր գպրոց կազմում է իր որյեկտների ցուցակը:

7. Ծրագրերում բարեկավված են յութերի գասավորման սիստեմատիկան: Այսպես՝ ծրագրերում փայտի և մետաղի մշակման բաժինները սիստեմատիկ գիտելիքներ են տալիս նյութերի տեխնոլոգիայի ելեմենտների, գործիքների և հարմարանքների, աշխատանքային պրոցեսների ծանոթության և տիրապետման գծերով: Այդ ելեմենտների բաշխումը կատարված է այնպիսի կապակցությամբ և արտադրողական աշխատանքի մոտավոր որյեկտների այնպիսի ընտրությամբ, վորպիսին պահանջում է ուսուցման սիստեմատիկան: Տեխնոլոգիայի և աշխատանքի միասնությունը մանկավարժական արտակարգություն կերպով յերեան գալիս. նախ՝ գալիս են պարզ գործիքները և նրանց տեխնոլոգիան, նրանց հետ միասին՝ պարզ ոպերացիաները և նրանց համապատասխան հասարակական-արտադրողական աշխատանքի պարզ որյեկտները:

Այդ գասավորումը յեթնագրում է, վոր աշխատանքային ուսուցման դասատուն ավյալ ծրագրի հիման վրա (հաշվի առնելով գպրոցի արտադրական ըջապատը, կահավորումը և աշակերտների պատրաստությունը)՝ իր աշխատանքային պլանն ե կազմում, ուր պետք է նախատեսի նյութերի և գործիքների ուսումնասիրության մշտական կավը՝ արժեքներկայացնող իրեր պատրաստելու համար աշակերտներից պահանջվող ունակությունների տիրապետման հետ: Աշխատանքային ուսուցման գծով գիտելիքներ և ունակություններ ձեռք բերելը պետք է իրենից ներկայացնի միասնական մանկավարժական մի պրոցես:

Արտադրության գլխավոր ճյուղերի կլասիֆիկացիան կատարված է լենինի և կենտկոմի ցուցմունքների համաձայն: Ծրագրերը նախատեսում են՝ 1) ծանոթություն ելեք-

տրական ենք բգիայի արտադրության, 2) մեխանիկական արտադրությունը և նրա ելեքտրիֆիկացիան, 3) քիմիական արտադրությունը և ելեքտրականության կիրառումը նրա մեջ, 4) ագրոնոմիայի հիմունքները: Այս ամենին վորպես հիմք է հանդիսանում արտադրության բոլոր ճյուղերի ենթագետիկ բազայի և արտադրության սոցիալիստական կաղմակերպությունը:

Այդ կլասիֆիկացիայի համապատասխան ել տրված են ծրագրի բաժինները. 1) մեխանիկական արտադրություն՝ փայտի մշակում և մետաղի մշակում (այս բաժինն ապահովում է աշակերտների կողմից հիմնական գործիքների գործածության ունակություններ ձեռք բերելը և ոգնում նրանց ըմբռնելու խոշոր մեխանիկական արտադրության պրոցեսները և նրա ելեքտրիֆիկացիան). 2) ագրոնոմիայի հիմունքները. 3) ելեքտրոտեխնիկա. 4) սոցիալիստական արտադրության կազմակերպումը՝ կապված մայր արտադրության մեջ տարվելիք արտադրողական աշխատանքի հետ: Յոթնամյա լում՝ աշակերտների անբավարար պատրաստության հետևանքով, քիմիական արտադրության ծանոթությունը չետրվում: Բայց վորովհետև տասնամյա դպրոցի 3-րդ կոնցենտրը առաջիկա մեկ-յերկու տարվա ընթացքում չի ընդունվելու մեջ քանակությամբ աշակերտներ, և 7-ամյա կը թությունն աշակերտների մեծամասնության համար լինելու յե պոլիտեխնիկական կրթության ավարտում, այդ պատճառով ծրագրերը նախատեսում են վորոշ ծանոթություն քիմիական արդյունաբերության հետ՝ ելեքտրոտեխնիկայի և վայտամշակման բաժիններում:

Արտադրության գլխավոր ճյուղերի ճիշտ կլասիֆիկացիան հնարավորություն ե տալիս չըրգել կոնկրետ արտադրությունների բազմաթիվ ճյուղերի մեջ և ուսումնասիրել վոչ ամեն ինչ, այլ ժամանակակից արտադրության իսկական հիմունքները, ինչպես այդ պահանջում ե կենուկոմի վորոշումը: Ներկա ծրագրերը 7-ամյա դպրոցի սահմանում ապահովում են ինդուստրիայի հիմնական սկզբունքների տեսական և գործնական ծանոթությունը: Դրան կարելի յե հասնել՝ տեսականում և գործնականում ուսումնասիրելով՝

1. ժամանակակից արտադրության հիմնական գործիքները,

2. ժամանակակից ինդուստրիայում գործադրվող կարևորգույն նյութերի հիմնական տեխնոլոգիական հատկությունները,

3. ձեռքի և մեքենայական աշխատանքի հիմնական պրոցեսները,

4. խոշոր արտադրության առանձին աշխատավորի աշխատանքի արտադրության կազմակերպման և պլանավորման գիտական կազմակերպության հիմնական սկզբունքները:

Աստիճանաբար աճող այս ելեմենտների գիտելիքները և ունակությունները բաղադրության ստեղծում, վորոնում և ծանոթանալու ժամանակակից ինդուստրիայի սկզբունքներն՝ ընդհանրապես:

Դպրոցի և աշխատանքային ուսուցման խնդիրն եւ ծանոթացնել վիզուալ ժամանակակից ինդուստրիայի հիմնական սկզբունքներն: Այդ ծանոթությունը պետք է նաև յերեխաների մեջ զառտիարակի աշխատանքի կուլտուրա: Մրագիրն այդ խնդիրը լուծում ե հետեւյալ կերպ.

1. դպրոցականն սկզբից մինչեւ վերջ հասկանում ե իր աշխատանքի տեխնոլոգիական պրոցեսը և աշխատում և պահպաննելով ինդուստրիալ աշխատանքի կազմակերպության ստահանջները, այսինքն՝

ա) գիտի մշակող նյութի հիմնական հատկությունները,

բ) գիտի բանող գործիքների կառուցվածքը, գործողության սկզբունքը և գործադրությունը,

գ) ոգտվում ե գծագրի և հրահանգչական քարտից,

դ) պլանավորմ ե իր և իր կոլեկտիվի աշխատանքը,

ե) ճիշտ կազմակերպում ե իր աշխատանքի տեղը,

զ) տեխնիկական ոպերացիաները և նրանց կատարումը կառուցում ե աշխատանքի գիտական կազմակերպության ստահանջների հիման վրա,

է) աշխատում ե աշխատանքի բաժանման սկզբունքով և վերահսկողության յենթարկում աշխատանքի վորակը,

ը) ծանոթանում ե արտադրվող իրերի ինքնարժեքի նորմավորմանը և հաշվառմանը:

2. Աշակերտն ըմբռնում ե իր աշխատանքի հասարակական նշանակությունը.

ա) այնպիսի իրեր ե պատրաստում, վորոնք պիտանի յեն զարոցին, գործարանին, կոլխոզին, մանկապարտեզին և այլն:

բ) աշխատում ե կատարելով իմրի, արհեստանոցի արտադրական պլանի վորոշ մասը,

գ) աշխատանքը կազմակերպում ե սոցմրցման և հարվածայնության հիման վրա:

Աշխատանքի կուլտուրայի ելեմենտների սիստեմատիկ աճումը արհեստանոցներում, սրանց աշխատանքը խոչըր արտադրության աշխատանքի հետ բաղպատելը, աշակերտների կողմից այդ ելեմենտների գործադրությունը խոչըր արտադրության մեջ՝ ահա այն ուղին, վորով պետք ե ընթանա աշխատանքի կուլտուրայի դաստիարակությունը:

Ծրագրերով նախատեսված կուլտուրական աշխատանքի այդ վորակը աշակերտներին պետք է պատվաստել ուսուցման մեթոդիկայի և կազմակերպման ճիշտ կիրառումով։ Այստեղ վճռական դերը պատկանում է աշխատանքային ուսուցման դաստիքին։ Ծրագրերի կառուցման ժամանակ հաշվի յետնվել այն հանդամանքը, վոր դպրոցների խոչըր մեծամասնության համար գժվարությունների հետ և կապված աշխատանքային ուսուցման ծրագրերի մշակման գործին մասնակից դարձնել ինժեներատեխնիկական և ազգոնոմիական ուժերին։ Այսպիսի դեպքերում միանգամայն նպատակահարմար է յեղած մանկավարժական ուժերը դասավորել հետեւյալ կերպ։

1. փայտամշակումը, մետաղամշակումը և խոչըր մեխանիկական արտադրության ուսումնասիրությունն անցնում է աշխատանքի դաստիուն։

2. ելեքտրոտեխնիկան—բավականաչափ վորակ ունեցող աշխատանքի դեկավարի բացակայության դեպքում—անցնում է Փիզիկայի դաստիուն։

3. ազրոնոմիայի հիմունքները՝ կենսաբանության դաստիուն։

4. արտադրության կազմակերպումը՝ արտադրական ուսուցման դեկավարը (յեթե այդպիսին կա)։

Ճիշտ դասավորման հետ միասի անհրաժեշտ է կարգավորել փոխադարձ ոգնության գործը— աշխատանքային ուսուցման ծրագրերի տարբեր բաժինների դասատունների միջև, նրանց ու աշխատանքային ուսուցման դասատունների միջև՝ մի կողմից և նրանց ու հանրակրթական առարկաների դասատունների միջև՝ մյուս կողմից։ Որինակ՝ բնափայտի քիմիական վերամշակումը պետք է անցնի քիմիայի դաստիուն՝ փայտամշակման դեկավարի հետ միասին։

Ամենամեծ գժվարությունն առաջացնելու յե արտադրության կազմակերպման և մայր արտադրության մեջ կատարվելք արտադրողական աշխատանքի ծրագրի մշակումը։ Ծրագրեր տալիս ե այն գիտելիքների միջնիմումը, վոր աշակերտները պետք ե ստանան՝ անկախ մայր արտադրության բնույթից, և միայն մատնանչում է ձեռնարկության մեջ

աշակերտների կատարելիք արտադրողական աշխատանքի համար աշխատանքային տեղերի ընտրության ընդհանուր սկզբունքները՝ արտադրության կազմակերպության ուսումնական կապակցությամբ։

Աշխատանքային ուսուցման այդ բաժինը բացառիկ տեղ է գրավում։ Նա յոթնամյա դպրոցի աշխատանքային ուսուցման ավարտական բաժինն է։ Այս բաժնի խնդիրն է, սիստեմատիզացիայի յենթարկել, ամփոփել աշակերտների ձեռք բերած գիտելիքները տեխնոլոգիայից, աշխատանքի և արտադրության կազմակերպությունից, այդ գիտելիքները գործադրելով ձեռնարկության մեջ՝ աշխատանքի ընթացքում և լուսաբանելով նրանց դերը ձեռնարկության ուսումնասիրության ժամանակ։ Յեթե ծրագրի մյուս բաժններն ապահովում են պատմական մուեցում գեղի առանձին նյութերը, գործիքներն ու հաստոցները, աշխատանքի ձեերն ու պրոցեսները— արտադրության կազմակերպումը գաղտփար և տալիս ամրող արտադրության զարգացման մասին։ Տեխնոլոգիական պրանակորման, նորմավորման, հաշվառման և վերահսկողության ելեմենտներն աշակերտները ձեռք են բերում ծրագրի բոլոր բաժիններում, սակայն կազմակերպման բաժինն է միայն, վոր գործնականորեն ցույց է տալիս այդ մոմենտների կարեվորությունը ժամանակակից արտադրության մեջ։ Արտադրության կազմակերպման բաժինը հանդիսառ է մյուս բոլոր բաժինների բնական շարուակությունը նաև այն պատճառով, վոր աշակերտներն արտադրության կազմակերպման ուսումնասիրության կապակցությամբ՝ արտադրության աշխատանքը կատարում է արտադրության պատրաստում և ձեռնարկության մեջ։

Աշակերտների արտադրողական աշխատանքը ձեռնարկության մեջ կախում ունի խոչըր արտադրության կազմակերպման ուսումնասիրության խնդիրներից։ Դրան համապատասխան կատարվում է և աշխատանքային տեղերի ընտրությունը։ Զեռնարկության մեջ հատկացված տիպիկ աշխատանքային տեղերից 1—2-ը պետք է ընտրվեն այն հաշվով, վոր հնարավորություն լինի գործնականորեն ժամանակ ձեռնարկության մի վորեւ բանվածքի արտադրության հետ, և ապահովի գործարանի լաբորատորիայում մի տեղ, վորը հնարավորություն տա գործնականորեն ժամանակու վերահսկողության, նարմագործան և հաշվարկի հետ։ Աշխատանքային տեղերի ընտրության ժամանակականության համար է հաշվառման յենթարկել աշակերտների նախընթաց աշխատանքային և հանդարկթական պատրաստու-

թյունը, ինչպես նաև նրանց տարիքային առանձնահատ-  
կությունները։ Միաժամանակ, աշխատանքային տեղը  
պետք է համապատասխանի այն պահանջներին, վորոնք ապա-  
հովում են արհեստանոցներում աշակերտի ձեռք ընթած-  
ունակությունների ամբազումը և զարգացումը։ Աշխատան-  
քային աեղերի ընտրության ժամանակ միանգամայն ան-  
հրաժեշտ է ճարտարապետ-տեխնիկական ուժերի աջակ-  
ցությունը։ Ճարտարապետ-տեխնիկական աշխատավոր-  
ները պարտավորություններ են վերցրել իրենց վրա համա-  
միութենական ինժեներական 5-րդ համագումարում։

Ծրագրի արտադրության կազմակերպման բաժինը տա-  
լիս ե ժամանակակից ինդուստրիայի ամենարնդանուր  
սկզբունքները։ Աշակերտն այդ կարող ե հասկանալ այն  
գեղքում միայն, յերբ մենք ապահովենք մաքրմայլ դորձ-  
նական ծանոթություն նրանց հետ՝ ովյալ ձեռնարկության  
որինակի վրա. ըստ վորում բոլորովին ել չի պահանջվում  
ամբողջ ձեռնարկության, հաճախ՝ կոմբինատի, ուսումնա-  
կրությունը։ Պետք է վերցնել մեկ կամ մի քանի ցեխեր  
(հիմնական և ոժանդակ ցեխերից), վորոնց մեջ կարելի  
կլինի գիտել մի առարկայի պատրաստման տեխնոլոգիա-  
կան պրոցեսը (սկզբից մինչեւ վերջ), և այդ որինակի վրա  
ցույց տալ ժամանակակից ինդուստրիայի տեխնոլոգիական  
պրոցեսի զարգացման ամբողջ ուղղությունը և արտադրու-  
թյան կազմակերպման բոլոր կարեռագույն ելեմենտները։  
Արտադրության կազմակերպման ծրագրի մշակման ժամա-  
նակ՝ արտադրության նորագույն մեթոդներին ծանոթանալու  
համար նպատակահարմար և կազմակերպել եքսկուրսիաներ  
գեղի այլ ձեռնարկություններ (այնի առաջավոր) կամ  
նկարների և պլակատների ցուցագրում։

Գովրոցական արհեստանոցների աշխատանքը (ինքնու-  
րույն նպատակներից զատ) մի անհրաժեշտ ետապ ե ար-  
դյունաբերական արտադրության աշխատանքին նախապատ-  
րաստվելու համար։ Հինգերորդ և վեցերորդ տարիներում  
ծրագրերը նախատեսում են արհեստանոցների և խոշոր ար-  
տադրության բոլոր ելեմենտների սիստեմատիկ բազատում։  
5-րդ և 6-րդ խմբերի եքսկուրսիաներն ապահովում են այդ  
համեմատությունների կոնկրետ ըմբռնումը։ Եքսկուրսիանե-  
րը հանրակրթական առարկաներին նույնպես բավականաշափ  
դիտելու նյութ կտան։ Սույն ծրագրերի հիման վրա յուրա-  
քանչյուր գործոց պետք ե մշակի ուսուցման 5-րդ, 6-րդ և  
7-րդ տարիների ծրագրերով պահանջվող՝ մայր արտա-

դրության ողտագործման կոնկրետ պլանը և՝ մանավանդ-  
գրա որինակի հիման վրա՝ խոշոր արտադրության կազմա-  
կերպման-մանրամասն պլանը։

	ամրաց	7-րդ և	6-րդ և	5-րդ և
	130	30	40	60
	155	35	60	60
	60	20	20	20
	20	—	—	—
	35	—	—	—
	35	—	—	—
	40	—	—	—
	420	160	120	140

ՊՈԼՏՏԵԽՆԻԿ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄՐԱԳԻ ՄԵԽԱՆ

1. Մեխանիկական արտադրություն,  
ա) Գոյացի մշակում . . . . .  
բ) մեխանիկական մասնակցություն . . . . .  
մ) Արբանմիայի հետաքննություն . . . . .
2. Ելեկտրոնական էլեկտրոնական արտադրության  
արտադրության աշխատանք . . . . .
3. Արտադրության աշխատանք . . . . .
4. Գրադարան աշխատանք . . . . .

# ՊԱԼԻՏԵԽՆԻԿԱՆ ԱՅԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՓԱՅՏԱՄՇԱԿՈՒՄ

1. Ներածական գրույց

Բնափայտի նշանակությունը մեր սոցիալիստական չի-  
նարարության մեջ. — գործարանների, ելեկտրոկայաննե-  
րի, մեքենատրակտորային կայանների, յերկաթուղային,  
ջրային, ոդային և այլ տրանսպորտի, բնակարանների և  
կահկարասինների կառուցում և պատրաստում (քննության  
առնել փայտյա կառուցումներ ու իրեր, վորոնք ամենացայ-  
տուն կերպով ընդդում են բնափայտի նշանակությունը  
շինարարության մեջ: Նկարների, շինարարական պլակատ-  
ների, կինոնկարների ցուցադրում):

2. Բնափայտի, վորակու շինարարական և բանեցնելու  
նյութի, հատկությունները (5 ժամ)

Ա. Դրական հատկությունները. — (ա) կշռի թեթևությու-  
նը մյուս շինարարական նյութերի համեմատությամբ,  
բ) մշակման պարզությունը և հեշտությունը, դ) առածգա-  
կանությունը և կայունությունը (ՎՅԶԿՈՏԵ), մեխերը, շու-  
ռառապները՝ թեեռները (կոստիլ) պահելու համար, դ) ցածը  
չերմհաղորդականությունը:

Բ. Բնափայտի հատկությունները. — (ա) այրվելու և փոե-  
լու, բ) ճաքելու և կորանալու խոնավության փոփոխությու-  
նից, դ) ամրության տարրերությունը մանրաթելերի յեր-  
կարությամբ և լայնությամբ, դ) պնդության փոփոխու-  
թյունն ուստ տարիքի և խոնավության, ե) թեք շերտերի և  
կոստղների դոյլությունը: Ինչպես են տեխնիկայում ողտա-

գործում լնափայտի դրական հատկությունները և ինչպես  
են պայքարում նրա բացասական հատկությունների դեմ:  
Գ. Ամենից ավելի տարածված բնափայտի տեսակների  
ուսումնասիրությունների արտաքին նշաններով՝ կշռվ, հո-  
տով, մանըաթելերի նկարով: Թեթև տեսակներ՝ յեղենի,  
կազմամախի, սոճի, լորի, լաստենի. միջին ծանրության  
տեսակներ՝ կեչի, թղկի, տանձենի, հացի, կնձենի. ծանր տե-  
սակներ՝ կաղնի, հաճարի, բոխի, շիմշտենի:

Բնափայտի այլ տեսակների մշակման հեշտության և  
գժվարության համեմատությունը՝ սղոցելու, ուսնդելու,  
փորելու և ծակելու ժամանակ:

Դ. Բնափայտի բնական չորացումը. — Վոր բնափայտն և  
համարվում չոր և մշակման համար պիտանի: Սղոցած  
փայտեղենը և նրա տեսակները:

2. Աժանդակ նյութեր. — (ա) մեխեր, շուռուպներ, նրանց  
չափերն ըստ յերկացության և չափերի արժեքը. բ) սո-  
սնձ, նրա վորակի վորոշումն արտաքին նշաններով, դույ-  
նով, բեկմամբ, թափանցիկությամբ. ինչպես և ստացվում  
սոսինձը և ինչպես և պատրաստվում սոսնձելու համար.  
գ) փայտի համար արծենիչ նյութեր (ամենից ավելի տարած-  
ված գույների). ինչից և ինչպես են դրանք պատրաստվում.  
փայտյա իրերի վրա նրանց գործածության յեղանակը.  
դ) ապակեթուղթը:

3. Գործիքներ և հարմարանիներ (4 ժամ)

Ա. Գործիքներ. — չափող, նիշնող, ստուգող՝ մետր,  
անկյունարդ, քանոն, կարկին. սրաց կառուցվածքը, նշանա-  
կությունը, գործածության յեղանակը:

Բ. Կտրող գործիքներ. — (ա) սղոցներ՝ յերկայնական,  
լրայնական, միջակ և մանրատամ: Աղեղնասպոցների և ձեռ-  
լասպոցների համեմատությունը: Աղեղնասպոցները սարքե-  
նասպոցների համեմատությունը: Նյութի ամրացումը դազգյահին  
լու և ստուգելու ձեռները: Նյութի ամրացումը դազգյահին  
լայնությամբ և յերկարությամբ սղոցելու ժամանակ (ուղ-  
ղաձիգ և հորիզոնական): Սղոցելու ընթացքում ձիշտ բռնե-  
լու և շարժելու յեղանակն ու աշխատանքային դիրքը՝ ան-  
վտանգության տեխնիկան սղոցելու ժամանակը:

Բ) Աժանդակներ. — Միտակ, կրկնակի և կիսափուզան (փո-  
քը չափի և թեթևացքած կոճղակով): Նրանց կառուցված-  
քը չափի և թեթևացքած կոճղակով: Նյութի ամրացումը դազգյահին՝ լայն մակերեսներ, կո-  
ղեր, յեղեր և ճականներ ուսնդելու ժամանակ: Աժանդ-  
ակները ձիշտ բռնելու, չարժումները, բանդուրական դիրքը և  
սղոցելու ուժը Անդամնության տեխնիկան ուսնդելու ժա-

մանտկի: Ինչպես ուղղել սխալ ուսնդաները: Խանդած լայն մակերեսների ստուգումն անկյունաբրդով և քանոնով:

գ) Դրեք. — Տափակ և քառակուսի: Նրանց չափերը (լայնությունը՝ բառ նրանց կտրող շեղ յեզրի): Նրանց գործողության համեմատությունը փայտ սղոցելու և ուսնդելու հետ (ի՞նչ ընդհանուր և տարբեր կողմեր ունեն այլ յերեք տեխնիկական ոպերացիաները): Ինչ ձեռվ են նյութն ամրացվում դաղդյահին՝ փորելու և կտրելու ժամանակի: Ճիշտ բռնելու ձևը, բանվորի դիրքը՝ տափակ դրով աշխատելու և փորելու ժամանակի: Անվտանգության տեխնիկան տափակ դրով կտրելու և փորելու ժամանակի: Տափակ դրով սխալ կտրելու և փորելու պատճառները և նրանց ուղղելու ձևը:

դ) Շաղափներ. — Կենտարներով և պարուրաձև ծակիչներով (ձեւ և կառուցվածքը): Նյութի ամրացումը դաղդյահին՝ ուղղաձիգ և հորիզոնական ծակելու ժամանակի: Ճիշտ բռնելու ձևը, չարժումները և բանվորական դիրքը՝ ծակելու ժամանակի: Անվտանգության տեխնիկան: Աշխատողի ուժի լուսումը: Սխալ ծակելու պատճառները: Ցեղաստումներ (քազենկօբկի):

Ե. Պոտուտակիչ. — Նրա չափերն ըստ շուռուակների մեծությունների և նրա բանեցնելու ձևերը:

Ե. Հարվածող գործիքները. — Ատաղձագործի մուրճ և թակ, սրանց գործածությունը, կառուցվածքը, ճիշտ բռնելը, թաթի, դաստակի և ուսի ճիշտ հարվածները: Դիրքը՝ հարվածի ժամանակի: Անվտանգության տեխնիկան՝ հարվածների ժամանակի:

Ծանրություն. — Յուրաքանչյուր գործիք ուսումնասիրելիս անհրաժեշտ է իմանալ, թե այն ի՞նչպես պետք է պահպանել գործիքատնում և աշխատանքի տեղում (դաղդյահում):

2. Դաղդյահ. — Դաղդյահի բանվորական մասերը կողքի և հետեւ սեղմող հարմարանքները (մամլակներ): Նրանց կառուցվածքը: Դաղդյահի բարձրությունն աշխատողի հասակին համեմատ փոփոխելու հարմարանքը:

4. Աշխատանքի պրոցեսներ: Հասարակական-արտադրողական աշխատանք (50 ժամ)

1. Աշխատանքի պլան. շինվող իրերի տեխնիկական նկար կաղմելու: Իրի պատրաստման աշխատանքային ոպերացիաների ընթացքի հետևողականության վորոշումը: Պատրաստման, մոնտաժային — հավաքման ու դրվագման ոպերացիաներ:

2. Նյութի ընտրությունը՝ նրա տեխնոլոգիական ա-

ռանձնահատկությունների հաշվառումը (տեսակը, նրա արատները, պատրաստման ստանդարտությունը):

3. Նյութերի նիշնում և թույլատրանքի վորոշելը՝ սղոցելու և ուսնդելու համար: Ոգտագործումը մետաղի գծադրման ժամանակի: Նյութը ձևելու պարզ յեղանակները:

4. Ուղիղ գծով սղոցելը՝ յերկայնական, լայնական և թեք ուղղությամբ: Ուղիղ քառանիստ բթակի սղոցելը (մեկական, յերկուական, քառակուսի ուսիկներով): Սղոցելու ձշությունը՝ պատրաստման և մոնտաժային սղոցման ժամանակի:

5. Լայն և նեղ մակերեսների ուսնդելը միտակ ուսնդայով: Փուգանով ուսնդելը և ճակատ հանելը: Նախնական և գրվագման ուսնդելու տարրերությունը: Ուսնդելու հետևողականությունը և նրա ձշության վերստուգումը: Կոնտրոլ նիստերը, կոնտրոլ անկյունը, թույլատրանքի ճշգրտությունը՝ ուսնդելու ժամանակի:

6. Փայտ կտրելը և փորելը տափակ ու քառակուսի դուռը: Փայտի նեղ յեղիքը լայնական և յերկայնական կտրում՝ թակի հարվածներով: Միջանցիկ և խուլ բներ փորելը:

7. Փայտ ծակելը՝ նրա մանրաթելի լայնությամբ: Միջանցիկ և մինչև կես ծակելը: Տարբեր տրամագծերի անցքերը: Տվյալ տրամագիծ ունեցող անցքի համար կենտուրների ճիշտ ընտրություն: Անցքերի յեղիքատումը՝ շուռուակների գլուխների համար: Հաստոցի վրա ծակելը: Ծակիչ հաստոցը: Նրա կոնտրուկցիան, բանող մասերը և աշխատանքի ձևերը (անցնում են մետաղամշակման պարապմունքների բնիթացքում):

8. Շուռուակների պտուտակելը փայտի մեջ:

9. Հարվածների ոպերացիաներ՝ մուրճով և թակով: Զանազան յերկարության և տրամագծի մեխերի խփելը տարբեր հաստության և տեսակի նյութի մեջ (մեխերի ճիշտ ընտրությունն ըստ նյութի մեծության և պատրաստվող տարկայի դիմացկունության ու խփելու ձևի ձևերը: Առարկայի վրա մեխերի համաշատի դասավորումը: Ինչ միջոցներով պաշտպանել առարկայի մակերեսը՝ մուրճի և թակի հարվածներից փչանալուց):

10. Փայտի բանվածքների սոսնձելը: Մրանց մակերեսի նախայատրաստելը սոսնձելուց պառաջ:

11. Փայտի մակերեսների քերելն ապակեթղթով: Ինչ

ընդհանուր և տարրեր կողմէր կան այդ ոպերացիայի և  
փայտ սանդելու միջև:

12. Բանվածքների մակերեսների գրաւագումը:

13. Մոնտաժային (հավաքման) ոպերացիաներ: Միացումներ՝ մեխերի, շուռուպների և սոսնձի միջոցով: Միացումներ՝ կլոր, քառանիստ բթակներով և վրագիր մինչև փայտի կեսը, տարրեր անկյուններով, խարանով և նյութի ծայրերում:

5. Հասարակական-արտադրողական աշխատանքի արտադրանք—իրերը

Ծանոթություն.— Աշխատանքների յուրաքանչյուր խմբից աշակերտը պատրաստում և մեկական բանվածք:

1. Բարդ բանվածքներն աշակերտները պատրաստում են կոլեկտիվ կերպով և աշխատանքի բաժանումը կատարում ըստ ողերացիաների (սղոցողներ, սանդողներ, նշողներ, հավաքողներ, դրվագողներ), կամ ըստ մասերի (մշակելով յուրաքանչյուր մասն անհատորեն՝ սկսելով նյութի ընտրության մոմենտից, անցնելով ձեելուն, սղոցելուն, սանդելուն, վերջացնելով բանվածքն ամրացնելով):

2. Բանվածքների ցուցակը ներքոհիշյալ խմբերում տակա ենք մոտավոր կերպով: Նրանցով ղեկավարվելով՝ յուրաքանչյուր դպրոց կազմում ե բանվածքների սեփական ցուցակ, վոր պետք ե բավարարի արհեստանոցների, ուսումնական կարիքնետների, լարորատորիաների, մայր արտադրության, յենթաշեֆ հիմնարկի կարիքները:

Աշխատանքների առաջին խումբ (մասերի միացումը մեխրով).—ա) Զանազան արկղներ՝ բանվարազեն, մրգեր, ձուղարանու համար, բ) մանր անասունների կերի ամաններ, գ) պատղարակներ, հողի մաղեր, առուների համար կամրջակներ և այլն:

Աշխատանքի յերկրորդ խումբ (մասերի միացումներ՝ քառանիստ բթակներով և մեխերով).—ա) Մանր կենդանիների և թուչունների բներ, ճագարանոցներ, հավաքներ, աղավնաբներ և այլն. բ) զանազան ցանկապատեր, նստարաններ, սեղաններ) մեխերով ամրացրած և վոտքերը հողի մեջ խրած՝ ամառային հրապարակի, ճամբարի համար:

Աշխատանքների յերրորդ խումբ (մասերի միացումը՝ վրագիր, մինչև փայտի կեսը՝ քառանիստ բթակներով և շուռուպներով).—ա) Եկկեր, անթոների համար պատվանդան, գրքերի, քիմիական ամանների, գրքերի, քիմիական ամանների գարակներ, կարգավոր համար և այլն:

Աշխատանքների չորրորդ խումբ (մասերի միացումներ՝ կլոր բթակներով և վերի նշված ձևերով).—ա) Մարմնամարզական սանդուխով՝ կլոր հենակետերով (շվեդական ձևի), բ) փոցխեր (փայտից), գ) կլոր բիթերով՝ կախարաններ՝ հագուստական տեսակի ծալովի կահկարասիներ՝ կլոր և քառանիստներից, վորոնք միացվում են կլոր և քառանիստ բթակներով և հ) մետաղամշակման քանվածքների համար մասեր:

6. Եվկուրսիա դեպի փայտամշակման խոշոր արտադրություն

Փայտի մշակման ձեռքի և մեքենայական ձևերի դիտում: Ծանոթություն աշխատանքային տեղերի կազմակերպման և բանվորների միջև աշխատանքի բաժանման:

7. Յեզրափակիչ զրույց՝ ամբողջ դասընթացի բոլոր բաժինների արդյունքներն ամփոփելու համար: Եքսպոնատների պատրաստություն և ընտրություն: Դպրոցական ցուցահանդեսներ:

ՄԵՏԱՐԱՄՇԱԿՈՒՄԸ (60 ժամ)

1. Ներածական գրույց (2 ժամ)

Մետաղների նշանակությունը և գործադրությունն արդյունաբերության, գյուղատնտեսության մեջ, արանսպորտում և յերկրի պատշաճանության գործում: Մետաղի գործադրությունը կենցաղում և շինուարական կառուցումների մեջ:

Ծանոթություն մետաղի գործադրության պատմության հետ: Ինչպես ե մետաղը՝ մշակվում ժամանակակից խոշոր արտադրության մեջ:

2. Տեխնոլոգիական տեղեկություններ մետաղի մասին (2 ժամ)

1. Մետաղները՝ ու և գունավոր պողպատ, թուղ, յերկաթ, պղինձ ալյումին, ցինկ, անագ, արծիճ: Մետաղների կաթ, պղինձ ալյումին, ցինկ, անագ, արծիճ: Մետաղների ասթրերությունն՝ ըստ բեկման, գյունի, փայլի, կրոփ: Մետաղների գունավոր մետաղների հիմնական հատկությունները (պղնակություն, կուանելիություն, ջերմահաղորդություն): Պողպատի, թղի, յերկաթի ամենից ավելի գործածվող տեսակներ և նրանց գործադրությունը:

2. Ոժանդակ նյութեր. կավիճը և նրա գործադրու-

թյունը, կավճի պատրաստումը նշումների համար: Պըղնձ-  
արձասալի գործածելը նշումների ժամանակ:

### 3. Գործիքներ և հարմարանիներ (4 ժամ)

1. Նիշնչման գործիք և հարմարանքներ. ա) նիշնչման  
սար, նրա դերը, կառուցվածքը, նյութը: Սալի խնամքը:  
բ) գծիչ և կետիչ, նրանց կիրառումը.

գ) կարկին, նրա կառուցվածքը, գործադրությունը,  
դերը, սրելը:

2. Զափող և ստուգող գործիքներ. ա) մասշտաբային-  
քանոն, նրա դերը և գործադրությունը. բ) հաստաչափ  
(կոր կարկին) և ներքնաչափ. սրանց դերը և գործադրու-  
թյունը. գ) ստուգող քանոններ և անկյունարդներ. սրանց  
դերը: Քանոնով և անկյունարդով ստուգելու ձեւերը: Հույ-  
սի դիմաց պահելու մեթոդը և նրա ճշտությունը:

3. Անդմող հարմարանքներ. ա) սեղանի և զուգահեռ  
մամլակներ: Նրանց կառուցվածքը, դերը, գործողության  
սկզբունքը և գործողությունը: Բանվածքը մամլակների  
մեջ սեղմելու կանոնը: Ինչպես պետք ն մամլակը գործա-  
ծել և խնամել: Մամլակների այն տեսակները, վորոնք գոր-  
ծադրվում են հաստոցների վրա (ծակիչ, ռանդող) մշակող  
բանվածքների ամրացման համար. բ) ձեռքի մամլակներ.  
սրանց գործադրությունը. գ) սեղմակներ (ստրուցինկա),  
սրանց դերը և գործադրությունը:

4. Մշակող գործիքներ և հարմարանքներ.—ա) Խարտոց-  
ներ, սրանց կառուցվածքը և նյութը: Խարտոցների տար-  
րերությունն իրենց ձեռք. ծրատները (նարեգկա) և չա-  
փերը: Խարտոցների գործածությունը և խնամքը: բ) Հա-  
տիչներ և տիգաձեւ հատիչներ, սրանց ձեր, նույթը, չափերը  
և կորող մասի անկյունը: Գործադրությունը: գ) Մետաղա-  
սողոց: Մետաղասողների տեսակները: Մետաղասողոցի մա-  
սերը, մետաղասողի հաստոցը և սողոցաթիթեղները: Մե-  
տաղասողի հաստոցի կառուցվածքը՝ մշտական յերկարու-  
թյամբ և չարժուն: Սղոցաթիթեղը, նրա չափերը, նյու-  
թը: Սղոցաթիթեղը հաստոցին ամրացնելը և դրա կանոնը:  
Մետաղասողի բանեցնելը: դ) Մուրճեր: Սրանց տարբե-  
րությունն սատ ձեփ, նյութի և կշորի նայած աշխատանքի  
բնույթին: Փականաղործի մուրճերի տեսակները, սրանց չիմ-  
նական չափերը և կշորը: Մուրճի կոթերը, սրանց ձեր,  
նյութը, մուրճն ամրացնելը: Մուրճերի գործադրությունը:  
ե) Ծակիչներ՝ դլանաձեւ և փետրավոր: Սրանց ձեր,

նյութը, կտրող մասերի անկյունները: Գործողության սկիզ-  
բը և գործադրությունը: Ծակիչների չափերը:

զ). Ծակահատներ և գրոշմիչներ: Սրանց դերը և գոր-  
ծադրությունը: Նյութը և չափերը:

է). Զողիչներ, սրանց դերը և ձեր: Ելեքտրական զո-  
ղիչները, սրանց առավելությունը և գործադրությունը:

ը) Զեռքի գչիրներ (գրելլ): Սրանց կառուցվածքը,  
գործողության սկզբունքը և գործադրությունը: Հասկա-  
ցողություն ելեքտրական գչիրների, սրանց առավելու-  
թյունների և կիրառման մասին:

թ) Զողիչ լամպ, սրա կառուցվածքը, գործողության  
սկիզբը և գործադրությունը: Ինչպս պետք և վարվել զողիչ  
լամպի հետ. անվտանգության տեխնիկան նրանով աշխա-  
տելու ժամանակական մասին:

### 4. Ծակիչ հաստոց (2 ժամ)

Ծակիչ հաստոցի գլխավոր մասերը. իլիկ (շղինդել),  
շարժող մեխանիզմ, մատուցող մեխանիզմ, սեղան: Սրանց  
դերը: Ծակիչը փամփուշին ամրացնելու հարմարանքներ:  
Բանվածքներն ամրացնելու հարմարանքներ: Ծակիչ հաս-  
տոցի զարգացման պատմությունը: Ծակիչ հաստոցներ  
փայտի և մետաղի մշակման համար:

5. Աշխատանիքի պրոցեսներ: Հասարակական-արտա-  
դրողական աշխատանիք (50 ժամ)

1. Պատրաստվելիք իրի գծագրեր (եսկիզներ) կազմելը:  
իրի պատրաստման հետևողականության վորոշումը:

2. Նշումը: Նշման հիմնական ետապները. բանվածքի  
ներկելը, նշումը և կետիչով կետելը: Հարթությունների  
նշումների ձիշտ ձերը: Նշումների նշանակությունն ար-  
տադրության մեջ:

3. Մետաղասողով կտրելն ընստ պարագծի: Մետա-  
ղասղոցով կտրելու ձիշտ դրվածքը, բանվորական դիրքը և  
գործիքը բոնելու ձեր:

4. Հատելը՝ մամլակների շուրթերի ուղղությամբ. մե-  
տաղի հատումը սալի վրա: Հատելու ձիշտ ձերը և ձիշտ  
դիրքն աշխատանքի ժամանակ, գործիք բոնելու ձեր: Հա-  
տելու կիրառումն արտադրության մեջ:

5. Բանվածքներ խարտոցները: Ձիշտ դիրք ընդունելը,  
գործիք բոնելը: Ձիշտ շարժումներ: Բանվածքի ձիշտ սեղ-  
մելը: Խարտոցվող բանվածքների ստուգումը քանոնով, ան-  
կյունարդով և հաստաչափով:

6. Զեռքի գչիրի ոգնությամբ ծակելը: Աշխատանքի ձեռքը ձեռքի գչիրով ծակելու ժամանակ: Զեռքի գչիրով ծակելու կիրառումը:

7. Ծակիչ հաստոցով ծակելը: Բանվածքի ճիշտ ամրացումը ծակելու ժամանակ: Ծակելու ճիշտ ձեռքը և անցքերի յեղատումը: Անվտանգության տեխնիկան՝ հաստոցի վրա ծակելիս:

8. Շարժուն և անշարժ մասերի դամելը: Գամելու ճիշտ ձեռքը: Գամելու գործադրությունն արտադրության մեջ:

9. Զողելը դյուրահալ խառնաձույլով և անազով: Զողելու ձեռքը: Անվտանգության տեխնիկան՝ զողելիս:

6. Հասարակական-արտադրողական աշխատանքի արտադրանիք-իրերը.

Աշխատանիքի առաջին խումբը.—ա) Պտուտակիչներ (տափակ), բ) մազնիսներ (տափակ), գ) գծիչներ, հերյուններ, դ) յերկաթայա տուփեր (դպրոցական արհեստանոցների և կարինետների համար):

Աշխատանիքի յերկրորդ խումբ.—ա) Դարտակների ունկեր, մակագիրներ, բ) կորակարկին, գ) ներքնաշափ:

Աշխատանիքի յերերորդ խումբ.—Փոցի (առաջին աստիճանի (դպրոցի համար), բ) բահեր մանկապարտեղի համար, դ) բրիչ (առաջին աստիճանի դպրոցի համար):

Աշխատանիքի չորրորդ խումբ.—ա) Պատվանդաններ կարինետների համար, բ) Արքիմեդի որենքը ցուցադրելու գործիք:

7. Մետաղի մշակումը խոշոր արտադրության մեջ

Ծանոթություն մետաղի մշակման հետ՝ մետաղագործարանում կամ մայր արտադրության մետաղամշակման ցեխում, վորի նպատակն է գտնել գործարանում և արհեստանոցում մետաղի մշակման ձեռքի միջն յեղած տարբերությունը (նշումը, գծագիրը, հրահանգչական քարտը, աշխատանքի տեղի կազմակերպումը, աշխատանքի բաժանումը):

Վորակի ստուգումը խոշոր արտադրության մեջ: Զեռքի և մեքենային մշակումը: Վերջինիս առավելությունը ժամանակակից արտադրության մեջ:

## ՈՒՍՄԱՆ ՎԵՅՏԵՐՈՐԴԻ ՑԱՐԻ

### ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՓԱՑՏԱՄՇԱԿՈՒՄ (40 ժամ)

Ներածական գրույց (1 ժամ):

Արդյունաբերության այն ճյուղերը, վորոնք մեր շինարարությանը մատակարարում են վայտեղեն և սրանից պատրաստված իրեր.—անտառային տնտեսություն (հումուրային), անտառային արդյունաբերություն, անտառամշակման արդյունաբերություն:

Ինչ ենք մենք արել արդյունաբերության վերոհիշյալ ճյուղերում 1-ին հնդամյակի ընթացքում, և վորոնք են 2-րդ հնդամյակի հեռանկարները: Ծանոթություն վայտամշակման կամ անտառամշակման ձեռնարկության հետ (անտառամշակման և վայտամշակման նկարների, պլակատների, դիագրամների, կինոնկարների ցուցադրում):

2. Տեխնոլոգիական տեղեկություններ փայտանյութերի մասին (3 ժամ)

1. Ծառի աճման բարենպաստ և անբարենպաստ պայմանները՝ նրանից լավ և վատ վորակի բանվածքային կամ շինարարական նյութ ստանալու իմաստով:

2. Փայտի մթերումը: Զեռքով և մեքենայով ծառահատում: Ծառերի ճյուղերի գործադրությունը:

3. Անտառաղոյման գործը: Ինչպես պահպանել գերանները և սողացած նյութերը: Ինչպես են աշխատում ուղղաձիգի և հորիզոնական շրջանակային սղոցները: Սղոցած գեձիք և ստացած ստանդարտ նյութերը:

4. Թաներա, կլյուպա (տակառի գոտի) փայտի ծղութարարաստելը:

5. Փայտի արհեստական չորացումը: Ոժանդակ նյութեր՝ լաք, արծնանյութ, մոմ: Ինչպես և ինչից են սրանք պատրաստվում: Մակերեսների գրվագումը սրանցում:

3. Գործիքներ (3 ժամ)

ա) Չափող, նշող, ստուգող գործիքներ: Անկյունաշափ, պծաքաշ: Մրանց կառուցվածքը, գերլ, կիրառումը, սրանց աշխատելու ձեռքը:

բ) Կորող գործիքներ. —ա) սղոցներ (կլոր սղոց) — (ուսումնասիրվում է հրդիմքի համար տրված սխեմայով):  
բ) ուսնդաներ՝ ակոսահան և ագուցահան (Փալց—գորել, չպունդորել). գ) շաղափ՝ գդալաձև փետուրով. փետրի տարբերությունը կենառութից. գործադրելու դեպքերը. ծակելու կանոնները. դ) խարտոցներ և կարկիններ. սրանց կտրող մասերի կառուցվածքը; Սրանց գործողության տարբերությունը սղոցից և ուսնդայից. սրանց գործադրության ճշտ ձևերը՝ բռնելը, չպիտմները և ուժի գործադրումը: անվտանգության տեխնիկան՝ սրանցով աշխատելիութեան կամ աշխատանքի աշխատանքի աշխատանքի աշխատանքի:

#### 4. Աշխատանքի պրոցեսներ: Հասարակական-արտադրողական աշխատանք (33 ժամ)

1. Յուրաքանչյուր իր պատրաստելու համար աշխատանքի պլան կազմելը: Աշխատանքի բաժանում՝ աշխատանքի ընթացքում:

2. Նյութի ընտրությունը՝ հաշվի առնելով տվյալ կոնստրուկցիայի բանվածքների համար ամենից ավելի բարել պատրաստելությունները: Բանվածքի համար պահանջվող նյութի հաշվարկը:

